

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12... Թր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան... 14 Թ.


Վեցամսեայ... 7 «

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար
Վեցամսեայ 1.50 «

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԱՍՅԷ

Redaction du journal
"Ирвоуик"
VARNA (Bulgarie)
Редакция
на вѣстникъ
„Ирвоуикъ“
ВАРНА
Գրութիւնք եւ տ չնի
տրոշիր

ԿԸ ԽՆԴԻՐՈՒԻ միւր յարգոյ բաժանորդներէն որ հաճին իրենց բաժնեկիցիները զրկել ընդ փոյթ :
Անցեալ տարուէն զարտք ունեցողներուն անունները պիտի հրատարակենք եւ թերթերուն առաջումը պիտի դադարեցնենք :

ԱՌՍԶԱՐԿ ՍԸ

Սօֆիայի ազգային Յանձնաժողովը կրկին Պատրիարքարան նամակ մը ուղղելով, տեղեկութիւններ հաղորդած եւ խնդրած է Առաջնորդին զալուստը փութացնել : Միւս կողմէ նոյն յանձնաժողովը նախագահ Տ. Յովհան քահանայ Մանգակունի այցելութիւն տուած է Սօֆիայի թուրք գովիւէր Ալի Ֆէրուհ պէյի եւ տեսակցած է առաջնորդական խնդրոյն նկատմամբ :

Յաւախ է որ ցարդ եղած դիմումները անհետեւանք կը մնան եւ Ս. Ծնունդին հոս սպասուող առաջնորդին գոնէ չմինչեւ Ս. Զատիկ գալը ապահովող ոչ մէկ եւրաշխիք չը տեսնուիր եւ վիճակին եկեղեցական գործերը երեսի վրայ կը մնան : Մենք կը կարծենք թէ կը բաւէ այսչափ երկարամիտներ պոլսական ձգձգումներու եւ քմահաճոյքներու խաղալիք լինելնին : այլ եւս պէտք է մեր երեսը ուրիշ կողմ դարձնել եւ էջմիածնէն ուղել առաջնորդական ընտրելիաց ցանկ մը ու նոր ընտրութիւն մը ատարել : վստահ ենք թէ վեհ. կաթողիկոսը պիտի բարեհաճի կարող եկեղեցական մը մեզ ալ ուղարկել, ինչպէս Եւրոպայի եւ Ամերիկայի քաղաքացիաց չլքուցաւ այդ շնորհը :

Թերեւս առարկուի թէ քանի մը տարի առաջ վեհ. կաթողիկոսին եւ Պալտոյ Պատրիարքարին միջեւ եղած կարգադրութեամբ մը Պուլկարիոյ եւ Ռուսիայի վիճակներուն հոգեւոր վերին հրահանգները Պատրիարքարանի ձգուած էր : Այո՛, այդ կերպ կարգադրութիւն մը կար, բայց

դա չը նշանակէր թէ Ամենայն Հայոց կաթողիկոսը Պուլկարահայերը լքած է յաւիտենապէս պոլսական միջին քմահաճոյքներու խաղալիք ըլլալու աստիճան : Ընդհակառակը, Ն. Ս. Օժուլիւնը պատրաստ է մեր օրինական եւ բացատրելի մէկ դիմումին վրայ գոհացում տալ մեր հոգեւոր պէտքերուն, որ առ այժմ բանիբուն առաջնորդ մը ունենալուն մէջ կը կայանայ :

Արդ, Պատ. Յանձնաժողովը եւ պատգամաւորներու ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս առաջարկութեան վրայ թէ՛ դադրին անօգուտ տեղը ժամաւաճառ ըլլալէ, դադրին Պատրիարքարանին եւ թուրք պաշտօնատուներու դռները զարնելէ, ու դիմեն ուղղակի Ս. Հայրապետին :

Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մար. Արեւելքի մէջ Ռուսիոյ ծանրագէտ զորադաւ սպ. Վիլյոցիս, խնդիր է գրառել թէ մերձակայ Արեւելքի արդի շփոթ կացութիւնը կարելի կը ըլլայ առանց Ռուսիոյ ազդեցութեան ներգործութեան բարեփոխել : Հարկ չէ բացատրել թէ պարզանեալ երկրներու հորիզոնը առաւել քան երբեք ամպամած է այս միջոցիս : յատկանշական երեք պարագաներ մանաւանդ Պալքանի վիճակը կը ծանրացնեն այսօր :

Նախ՝ Մակեդոնիոյ ինքնավարութիւնը պահանջող յեղափոխական յանձնախումբերուն յուսահատական կողմի մը պատրաստութիւնն : Երկրորդ՝ Պուլկարիոյ եւ Ռուսիոյ յարաբերութեան խզումի մերձեցող՝ ներկայ փափուք վիճակը, զինուորական պատրաստութիւնները, էնթրիքները եւ դիւանագիտական փոխադարձ սպառնալիքները : Երրորդ՝ թուրք զօրաց եւ Ալպանացոց ընդհարումները վարչական բարենորոգմանց պատճառաւ :

Պաշտօնական անդորրացուցիչ լուրերուն հակառակ, իրողութիւնը ցոյց կուտայ թէ Սուլթանի կառավարութիւնը Ռուսիոյ զբաղեւ զինակէն օգտուելով՝ բարենորոգումը եւ օտար ռոտիկանութեան մը կազմակերպութիւնը կը դանդաղեցնէ, ինչ որ անխուսափելի կընէ յառաջիկայ դարնան ապստամբական նոր շարժումներ :

Ռուս պոլսականներու տակ դիւրին է մակարելի թէ Աւստրո-Հունգարիան պիտի մղուի զինուորական գործողութեան մը, եւ ինչպէս շատերու հաւանական կը թուի, աւստրիական բանակը Նովորոզարի սանձազը գրաւէ, Ալպանացոց շարժումին վերջ տալու համար եւ, պատերազմի պարագային, մինչեւ Ալպանիկ յառաջանայ ու թոյլատրէ Պուլկարիոյ գրաւել Մակեդոնիոյ սլաւոնական դաւանները : Այսօր Պուլկարիան կառավարող Սթանպուլիական կուսակցութեան նախկին հակառուս քաղաքականութիւնը նկատի առնելով, ոմանք շատ հաւանական կը գտնեն Աւստրիոյ եւ Պուլկարիոյ միջեւ այս տեսակ համաձայնութիւն մը, մանաւանդ թէ այսօրուան Սերպիան ալ Աւստրիոյ քաղաքականութեան խորհրդով մեծ պատճառներ չունի եւ կրնայ իրեն համար այդ պարագային Հին Սերպիանէն կտոր մը ապահովել : Դեպքերու ընկալն բերումով այս տեսակ յառաջիկացում մը որչափ որ ալ սրաքիւլ ֆոն խանգարելու ընդթ ալ ունենայ, չը կարծուի որ անոր դէմ եւրոպական միւս պետութիւնները լուրջ ընդդիմութիւն մը յարուցանեն : մանաւանդ Անգլիան զսէ կը մնայ, որովհետեւ իրեն համար հակառակ Ռուսիոյ Աւստրիոյ ազդեցութեան աճումը նախընտրելի է : Իրաց վիճակէն արտաքինութեամբ այս հետեւութիւնները գծելէ յետոյ, պէտք է անմիջապէս աւելցնել թէ վիեննայէ փութկոտ հեղուկներ կը արուին Աւստրո-Հունգարիոյ զինուորական պատրաստութիւններ տեսնելու տարածաշրջանները դէմ : Կոմս Կոլուխովսքի եւ Կոմս Թիցա հանդիսաւորապէս յայտարարեցին թէ Պալքանի վիճակը ապահով է, եւ նշանակելի յամառութեամբ մը ըրին որ Աւստրիոյ եւ Ռուսիոյ նպատակներն նոյնն են եւ յայտարարեցին թէ Աւստրո-Ռուս համաձայնութիւնը հաստատ պիտի մնայ նոյն իսկ այն պարագային երբ Սրաքիւլ յօն պահպանել անկարելի ալ ըլլայ :

Բայց կարելի՞ է հաւատալ ընծայել զիւսանալէսներու բնական բարձունքէն արտասանած հանդիսաւոր խօսքերուն, երբ գիտենք թէ անոնք միեւնոյն օրուան մէջ իրենց ըսածին հակառակ հրահանգներ կուտան իրենց ստորագրապա պաշտօնեաներուն : Ինչպէս այսօր չէ կարելի սքողել թէ Հունգարական եօթներորդ բանակը 2-3 շաբաթէն շարժման վիճակի մէջ պիտի լինի, եւ թէ պատրաստութիւններ կը տեսնուին այս վերջին ամիսներուն Պալքանի մէջ կողմի մը կանխատեսութեամբ, եւ ամէն ինչ կախում ունի կը լին զինուորական եւ դիւանագիտական չըջանալիներու մէջ, այժմ Սօֆիայի եւ վիեննայի միջեւ տեղի ունեցող զադմուր բանակցութիւններէն :

ՍԵՐՊ ԵՒ ՊՈՒԼԿԱՐ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ

(Առաջին մասը տես մեր նախորդ թուոյն մէջ)

Չ. Պուլկար, որուն կը նախագահէր սերպ ուսանող Լուպ. Նեպիչ, ունեցողից Ալ. Զանքով ուսանողին ընդարձակ բանախօսութեան պալքանեան պետութեանց եւ մակեդոնական հարցի մասին : Բանախօսը ի վեր հանեց մանաւանդ այս վերջին հարցին միջազգային բնոյթը, նկատելով թէ՛ անիկա ոչ թէ Պուլկարիոյ եւ Սերպիոյ հարց մըն էր, այլ մակեդոնական բնակչութեան, ի միասին հալուելով Պուլկարիներէն եւ Սերպներէն զատ, նաեւ Ալպանացիները, Յոյները եւ այլն : Տրամաբանօրէն, եւ պատմաբանօրէն պատճառաբանելով նա ջանաց յանգիլ այն եղրակացութեան թէ՛ այն հարցը կարելի է միայն լուծել միահաղոյն յեղափոխութեամբ մը, եւ մասնաւոր ըրաւ Պուլկարիոյ ու Սերպիոյ եւ միւս փոքրիկ պետութեանց դերը, իբր հակադէմ եւրոպական պետութեանց դերին, որք իրենց մասնաւոր շահերուն պատճառաւ, իրենց վրայ առած էին այս հարցին լուծումը :

Հոս երեւան կուգայ անհրաժեշտութիւնը ընդհանուր եւ միաբան գործողութեան մը, որուն իրական մարմնացումն է պալքանեան ազգութիւններուն դաշնակցութիւնը : Բանախօսին պատասխանեց սերպ ուսանող Գոսթա Նովակովիչ, Անկէ ետքը ուրիշ մէկ քանիներ լրացուցին եւ ընդլայնեցին հարցին մէկ քանի կէտերն ալ, եւ ապա կարգացուեցաւ Յունուար 9 ին երկու ազգերու պատգամաւորներէն ընդունուած որոշումը :

Իբր հետեւանք այդ որոշման, որ նորէն միաձայնութեամբ ընդունուեցաւ, քուէարկուեցաւ նոր որոշումը, հետեւեալ կէտերէն բաղկացած :

1. — Սերպ եւ Պուլկար ուսանողները ներկայ տարւոյս Յունուարի 9-ի որոշման առաջին կէտին հիման վրայ, դաշնակցութեան մը գաղափարը տարածելու պիտի աշխատին ջանալով միացնելու պալքանեան ազգութիւնները մաքսային եւ քաղաքական, դաշինքներով, Հետեւաբար վճռեցին. ա) Ողջունել յոյն եւ ուսմէն ուսանողները. բ) Յանձնարարել մասնախումբերուն որ անոնց կողմ մը ուղղին համերաշխ գործունէութեան, ի մասին Պալքանեան գործերուն :
2. — Նոյն որոշման երկրորդ կէտին հիման վրայ Մակեդոնական հարցը եւ ազատութիւնը չէ ոչ սերպական

ո՛չ ալ պուշկարական հարց, ալ Մա-
կեդոնիոյ բնակչութեան գործն է, եւ
անոր լուծումին միակ միջոցը կը
գտնուի կազմաւորելու եւ ինքնաձա-
նաչորութեամբ զարգացած ամբողջ
բնակչութեան միահաղոյն յեղափոխու-
թեան մէջ, մակեդոնական ազատա-
գրութեան շնորհակար եւ վտանգաւոր
կը համարին ամեն արտաքին միջամե-
տութիւնները, որ կը ձգնին արգելք
ըլլալ մակեդոնական յեղափոխական
շարժման կանոնաւոր զարգացման:

3.— Այս գաղափարները տարածելու
միջոցներուն գաղով վճռեցին թէ եր-
կու մասնախումբերը, փոխադարձ միա-
ձայնութեամբ, կրնան զբոյժինք եւ
այլն հրատարակել սերտեղէն եւ պուշ-
կարեղէն, նոյնպէս կրնան այնպիսի
արարքներու ձեւնաւորել, որ համա-
ձայն են առաջին որոշման հիմնական
սկզբունքներուն:

Այս որոշումները ծախսարութեամբ
ընդունուելէն յետոյ, հետեւեալ հե-
ռագիրը ղրկուեցաւ յոյն եւ ուսմէն
ուսանողներուն:

«Սերպ եւ Պուշկար ուսանողներս,
զերծ ամեն տեսակ ծայրայեղ-հայրե-
նասիրական եւ ազգայնամոլական դա-
դափարներէ, ղերծ նաեւ ո եւ է մոլոր
կարծիքէ իրականացնելու պատմական
ո եւ է նպատակ մը՝ ի հաշիւ Թուրքիոյ
գերի գտնուող ժողովուրդներուն, ալ
միայն մարդասիրական զգացումներով
ոգեւորեալ կազադակներ, կեցցէ՛ ինք-
նօրէն Մակեդոնիան, կեցցէ՛ Պալքան-
եան դաշնակցութիւնը, Ընդունեցէ՛ք
մեր արտաքին ողջոյնները»:

Ասկէ ետքը ժողովը փակուեցաւ
ընդհանուր խանդավառութեան մէջ:
Երեկոյն «Ալափեան սկուսմը»ին
մէջ հացկերոյթ կար, որոյ միջոցին
ցնծալից եւ սրտաղին բաժակաձառեր
առաջարկուեցան: Առաջին բաժակը
խմուեցաւ դաշնակցութեան համար,
ապա կարգաւ պուշկար ազգին եւ ու-
սանողութեան, Մակեդոնիոյ ինքնօ-
րինութեան, սերպ ազգին եւ ուսանող-
ութեան համար: Նահատակուած մա-
կեդոնական կողմերուն յիշատակին
եւ ամենէն վերջը «առ ի յաւիտեա-
կան» հանգիստ Թուրքիոյ սրուն Աս-

տուած ողորմին»: այս վերջին բաժակը
մանաւանդ մեծ ախորժանօք քամուե-
ցաւ ներկաներէն: Կէս դիշերին պա-
րերն սկսան, առաւօտուն ուշ ատեն
ուսանողք ցրուեցան:

Նոյն օրը պատեցան քաղաքին
մնացած մասերը: Ճաշէն վերջ «Կար-
միր Սեցգեմիս» պանդոկը հաւաքուե-
ցան ողջիւրթի քարեշէշեր բաժակը խմե-
լու: Իսկ երեկոյն ժամը 5 ին հիւ-
րերը միմեկեցան պայծառադրական կա-
ռախումբով:

Փոխադարձ այցելութիւնը պուշկա-
րական ուսանողներուն կողմանէ տե-
ղի պիտի ունենայ յաւաքիկայ մայր
Վին, երբ Սերպիան իր մեծ ազգային
տօնը կը կատարէ: Սերպ ուսանողնե-
րը պուշկար ուսանողներուն արժանա-
ւոր ընդունելութիւն սը ընելու համար
դեռ ասկէ հոգ ապրին, հոս ըստալով
այդ նպատակաւ հանգանակութիւն մը
որ դեռ առաջին օրը 4.000 լէվի հա-
տաւ: Սերպ ուսանողներու այցելութեան
հետ կապակցութիւն ունեցող գաղա-
փարը, կը յարէ «Ճնէվիկ»-երկու
պետութեանց իրարու մօտեցալը սա-
տիկ արձագանք կը գտնէ իշխանա-
պետութեան ամեն հաւարակական դա-
սակարգերու մէջ: Ի նկատի ունենա-
լով Պուշկարիոյ եւ Սերպիոյ վտանգը
գործէն (Թուրքիայէն եւ Աւստրիա-
յէն) համաձայնութիւն մը Սօֆիայի եւ
Պելկրատի միջեւ ուրիշ ժամանակէ ա-
ւելի անհրաժեշտ կերեւի, եւ իցի՛ւ
թէ գտնէ այս անգամ աւելի լրջապէս
նայէին մեր պատասխանատու մարմին
ները այն իրողութիւններուն որ այ-
սօր վաղը սեղի պիտի ունենան:

Սերպ-Պուշկարական միեմեմը
քաղաքական գաղափարներէն է, ա-
րուեստական կերպիւ ստեղծուած, ալ
ազգային գաղափարն է այն: Ճիշդ
ինչպէս ուստափորութիւնը, որուն չկը-
նար դիմադրել եւ ոչ մէկ ուժ մեր
երկրին մէջ:

Տեղիւնիկէն յաղորտած

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ա Ռ

ՊԵՏՐՈՍ ԳԱԼՍԱԵԱՆ

— ԵՅ —

Խմացայ թէ վառնա եկած էք
այն դատին համար որով կուգէք
դատաւարուել տալ «Իրաւունք»ի
պատասխանատու Տ. Ն. Տրակու-
լէվը: Նախ ըսեմ թէ Ձեր այդ
նպատակին մէջ չպիտի յաջողիք
եւ Ձեր կարուածը այդ ճամբով
չպիտի կրնոք գտնել:

1) Դանի որ քեզ դատաւար-
տող պաշտօնական նամակը Հնչ-
կուսակցութեան կարմիր կիւրքով
եւ «Իրաւունք կեդրոնի» ստորագ-
րուած «Իրաւունք»ի խմբագրա-
տան մէջ կը մնայ: 2) քանի որ
«Միս Եանկը մենք պաննեցինք»
ըսող փոթիկ ձեր մասնաճիւղին
պաշտօնական նամակին վաւերա-
կան օրինակը նոյն խմբագրատան
մէջ պահուած է, 3) քանի որ
դու (Գալսեան) քու բերանովդ
չատերու ներկայութեան մէկէ
աւելի տեղեր յայտարարած ես
«Միսի սպանութեան մասին մի
գարմանք, վերակազմ Հնչակ-
եաններէ ով որ Կովկաս երթայ
պիտի սպանենք», Գալսեանն
ալ պիտի սպանենք»: Եւ քու
այս յայտարարութիւնդ վկայող
չէզոքներ չատ կան:

Ուստի երբէք մի՛ փորձեր
զքեզ եւ քու ընկերներդ բարո-
յական ո եւ է բարձրութեան վրայ
ցոյց տալու ժողովուրդին, մին-
չեւ որ քաջութիւնը չունենաւ
Պատուայ Ատենի մը առջեւ դա-
տի ելնելու, որուն համար յարա-
նակքի խմբագրութիւնը միշտ եւ
ճակատաբայ պատրաստ է:

Իսկ եթէ այսպէս շարունակէք՝

օտար դատարաններ դիմել, ան-
միջներ օտար ոտով կանուխեան
յտնենել, անոր ասոր դէմ մա-
հաւան սպառնալիքներ կարգալ
եւ առտեց կարմրելու վերաշնու-
րիւն շորին միջոցաւ ուրանալ ու
Սապահիլեանի հետ թեւ թեւի
տուած հայ յեղափոխութեան ա-
նունը շահագործել միամիտ պան-
դուխաները խաբել, Ձեր կանգ-
նուած յաւիտեանպէս անդառնա-
լի կընէք: Այս ճշմարտութեան
եթէ չէք համապուր, հրամէցէ՛ք
Պատուայ Ատենի առջեւ, հոն պի-
տի համոզուիք:

ՀԱՅՈՒՆԵԿԵԻՌ
ՍԻՒՍԴՐԵԻ ՈՐԲԱՆԵԱՄ
Յ Ա Ն Ձ Ն Ա Խ Մ Բ Ի Ն,
1904 թուանար 13-էն սինկեւ
փետրուար 6-ը:

Մ Ո Ւ Տ Ք

Նուիրատու Տեարք՝

ՅՐ. ՄԵԴ.

Մ. Պ. Ապրիլեան	3.—
Ռ. Փ. Մեծիկեան	2.—
Յ. Վարդապետեան	1.—
Կ. Մարգարեան	1.—
Կ. Յ. Ակարի	2.—
Կ. Ն. Ուղտեան	1.—
Կ. Պապիկեան	2.—
Կ. Գաբրիէլեան	1.—
Մ. Լալեան	1.—
Հ. Կ. Հ. Համբարձումեան	1.—
Կ. Խաչատուրեան	1.—
Կ. Ս. Թորոսեան	2.—
Մ. Օհանեան	1.50
Կ. Մ. Պողոսեան	2.—
Ս. Եղիշեան	5.—
Եղբ. Թովմասեան	10.—
Ս. Յարութեան	1.—
Ի. Սիւյանով	2.—
Ս. Յովհաննէսեան	1.—

ԱՐՄԻՆ ՇԻՏԱՆԵԱՆ (11)

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

(Կաղանդի նորավէպ)

— Կիյոմ զրա՞ծ է. «Երախիկ քաղաքականու-
թիւնը շատ հաճելի է ինծի: Սա երկու կառավա-
րութեանց Գիւլիսի զուխը չը մտցունես... Նայէ
որ անոնք երգեն ու դու խաղաս... »:

— Իրա՛ւ է... ատանկ սուտիկէ գրութիւն մը
յանձնեց քեզի Գիւլիսիոյ գեապանն՝ իբր առ հա-
ւատեալ մը՝ սերական կիյոմիդ:

— Իրա՛ւ է: Բայց դու ուսկի՞ց գիտես որ ու-
րուանկարած ես զայն:

— Ապագան, հերկան ու անցեալը գործիքիս
խորհրդաւոր գաղտնիքներն են: Ասոր վրայ մի՛ գար-
մանար: Ինա՛ւ բան մը չէ՛: Երբ դու ալ սորովիս,
պիտի ապշիս ու ըսես թէ՛ «Ինչ խելիք եմ եղեր որ
խելքս չէի հասցուներ ասանկ առասպելական խաղի
մը»:

— Ա՛խ, չա՛տ չա՛տ կը ըսողձամ վարկեան մը ա-
ռաջ իմանալ: Աս թոյլը նկարներդ հրաշալիքներ
են իրենց հաճոյ եւ անհաճոյ տեսարաններով: Եթէ
ատանկ գործիք մը ունենամ, ըսել է թէ՛ «ապագան
ինծի ի՞նչ որ վերապահ է, պիտի գիտնամ ու ըստ

այնմ պիտի պատրաստուիմ» եւ մինչեւ այսօր կը
հաւատայ թէ՛ գտնէ եւրոպական տէրութեանց մէջ
անհամաձայն տարրը Գիւլիսիոյ ժողովուրդն է, եւ
միակ բարեկամս՝ կիյոմն է. սակայն այդ աղպէս չէ՛
եղեր. քու գործիքդ անոր պաշտօն տարու զի ու-
ցուցող Կայսրութեանը հանդէպ լարուած սոսկալի
դաւաղութիւն մը:

— Համբերէ՛... երբ մէկիկ մէկիկ անցեալիդ,
ներկայիդ ու ապագայիդ ճակատագրական անխու-
սափելի մարիկները տեսնես, ան ատեն սորոված կըլ-
լաս գործիքիս գաղտնիքը ու դու ալ անոր նմանը
հատ մը կունենաս պաշտօնիդ մէջ:

— Դու ալ գործիքին հրաշքով մտար հոս...
ընդհանրաց Սուլթան Համիտ, որ քիչ քիչ վարժուե-
լու երեւոյթ մը ցոյց կուտար:

— Հարկա՛ւ:

— Ուրեմն ես ալ կարող եմ անոր հրաշքով
բոլոր եւրոպական պետութեանց դիւանատունները
մտնել, առանց տեսնուելու:

— Անշու՛շտ:

— Ի՞նչ աղէկ բան... ան ատեն չեմ մտածեր
թէ՛ Աւստրիա, Ռուսիա Գիւլիսիա ու Անգլիա հա-
մաձայն են ա՛յն բարեկրօնական ծրարին, որ սար
սուռ կաղէ ինծի եւ կը կասկածիմ թէ դա՛ւ մընէ
երկրիս բաժանման ու յօշոտակութեան:

— Ա՛խ, այդ մտածումը, այդ կասկածը բնա՛ւ չի
պիտի ունենաս: Եթէ խօսքով սրտիդ մէջ գտնուած
որդը պիտի չքանայ ու դու հանդիսաւ չունի մը
հարեմանոցի վայելքները պիտի ծծես:

Սուլթան Համիտ խելայեղ վիճակի՝ միմիայն կուտ

որուն նմանը բնա՛ւ եղած չէր, խնդրեմէն եւ
երջանակալից ուրախութեան «Օ՛խ» մը քաջեց ու
արթնացաւ...

Աչքը չորդին պտտուց...
Մէկը չեկար:

— Յէ՛յ վախ, դարձեալ երազ էր... միմիկց ան
ու ինկաւ մահապալին վրայ...

Ե.

Որչա՛փ ատեն այդ ջախջախուած դրութեան մէջ
մնաց... չը գիտցուի՛ր. միայն թէ՛ երբ գրուիւ
վեր առաւ բարձէն ու նորէն սենեկին ալիւնները
դիտել ուղեց, յանկարձ լսեց մեղանուշ ձայն մը որ
Հարեմանոցի խորէն կուգար...

Սուլթան Համիտ թոյլ, մեղկ ու խեղճացած նկա-
րագիր մ'ունէր հանդէպ գեղեցիկ սեռին ու անոր
զգլիւն ու յանկուցանող ձայնէ՛ջատ կազդուէր.
հետեւաբար զգաց որ հոգին կը թթոթար, զգաց որ
իր է-լութեան մէջ անուշ վրդով մը կանցնէր, մէկ
խօսքով սիրաւ կը զարնէր ու ներքին ձգտում մըդէպի
զրօսարան-Դահլիճը կը մղէր զինքը, ուսկից աւելի
մօտէն ու յստակ կերպով կրնար լսել:

Երեւո՛ւն ու՛ ի կոտորած՝ ինչպէս՞ ծերա-
ցած ու ինկած՝ գաղան մը՝ Դահլիճը յառաջացաւ ան:
Ականջ դրաւ դուռի մը: Ահա՛ հարեմանոցի աղջկանց
երկը, զոր Սուլթան Համիտ լսեց.

«Իրեն թէ՛ «աշխարհք մը կայ
սիրոյ՛, գորովի՛

Ս. Յարութիւնեան	1.—
Ս. Աւետիսեան	0.40
Մ. Մարգարեան	1.—
Մ. Խոստեղեան	1.—
Մ. Յակոբեան	1.—
Վ. Մանուկեան	0.50
Մ. Մարտիրոսեան	1.—
Դ. Մուրատեան	1.—
Ս. Յարութիւնեան	1.—
Պ. Խաչատուրեան	0.20
Մ. Արապաճեան	0.60
Ս. Մարգարեան	1.—
Մ. Տէր Օհանեան	2.—
Ս. Մ. Զարուկեան	0.50
Հաճը Մ. Բապուշճեան	2.—
Մ. Թիթիւնճեան	1.—
Ն. Յակոբեան	10.—
Ս. Յ. Թորոսեան	2.—
Յ. Հաճը օղլուեան	1.—
Վ. Աղամեան	3.—
Եաթո Պ. Ալիբա	20.—
Մ. Թաղէսեան	2.—
Ճ. Ղազարեան	2.—
Մ. Թէլէկարճեան	0.50
Ա. Շալճեան	1.—
Մ. Թիթիւնճեան	1.—
Ե. Ղանչէկիւ	1.—
Լ. Մ. Պաքալեան	2.—
Յ. Փափաղեան	3.80

Համագումար՝ 106.—

Ե Լ Ք

Ն Պ Ա Ս Տ

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին ղրկուած թղթատարական մի պատուէրով, թիւ 10721	100.—
ԲՆԴԱՆՈՒՐ ԾԱԽԻՐ	
Վերոյիշեալ գումարը ոսկիի վերածելու համար 3 0/0	3.—
Նոյն գումարի փոխադրած իւր Յանձնարարեալ մի նամակի համար	0.75
Այլ և այլ Խմբի ծախքեր	1.25

Համագումար՝ 106.—

ՈՐԲԱՆԵՆԱՄ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

— Ե Լ Ք —

ԱԶԳԱՅԻՆ

Երուսաղէմ հասնող հայ ուխտաւորներու թիւը մինչեւ հիմա 330ի հասեր է։ Մինչեւ ռուսութիւնները 3500 ի կը հասնին և դեռ 5-6000 հոգի ալ կը սպասուի եղեր։

— Տիկին Եկատէրինէ Նատիրեանց Վանայ Սալնապատու աղջկանց որբանոցին 173 սովի նուիրած ըլլալով, այդ գումարին մեծագոյն մասը, 166 ոսկին, Վանայ մէջ շինուելիք նոր բարձրագոյն վարժարանին յատկացուել է, որովհետեւ այդ վարժարանի կառուցումը անցեալ տարի անկատար մնացած էր և աշակերտները անյարմար տեղ մը զետեղուած էին։

ԿԱՐԻՆԷ կը գրեն Քրո Արմենիայի թէ՛ Քրիստէնի դէպքին հետեանօք ձերբակալութիւնները կը շարունակուին և բանտարկեալներու թիւը օր ըստ օրէ կ'աւելնայ։

Տիգրանակերտէ փետրուար 9 թուականաւ կը գրեն թէ՛ Թիւրքիւնցի թէ՛ Թիւրքիւնցի պէյ իր մարդոց գլուխը անցած քանի մը օր առաջ յարձակած է Թիւրքիւնցի երեւելիներէն Գրիգոր Ասատուրեանի տան վրայ և տանտէր Գրիգորը, Սարգիս Գեորգեանը և Կարապետ Խաչատուրեանը սպաննելէ յետոյ կողոպտած է տան ամբողջ կարասիքը։

Թէ՛ Թիւրքիւնցի պէյի քանի մը մարդիկը ձերբակալուել են թէ՛ և, բայց Հայերուն վրայ խիստ ճշնշում կը բանեցնեն եղեր որ նը պատառնուր վկայութիւն տան թէ՛ Թիւրքիւնցի համար, որպէսզի

սա պատասխանատուութենէ զերծ մնայ։

ՄՈՒՇԷ կը գրեն թէ Պուլանը գի մէջ նոր հաստատուած Ձէրքէզները Հայոց գլխուն շարունակական փորձանք եղած են։ Ձէրքէզներէ Համիտ անունով մէկը օր ցերեկով սպաններ է Դեղուտ գիւղի երեւելիներէն թէ՛ Մաշուկեանը։ Մարգարեանը կը պաշտպանուի իսկ Հայերը սպանալիք կը կրեն։

ՌՈՒՍՃՈՒՓԷ մեզ կը գրեն «Խրապեալ Միսի և Չիթճեանի արիւնովը կարմրած տեղւոյս ոճրագործ խմբակին դաւադրութեամբը ու մատնութեամբը ամիսէ մը ի վեր բանտարկուած պ. Սուքիկեանի դէմ Հայրենիք թերթի մէջ երեւցած ամբաստանութիւնները հիմնովին զրպարտութիւններ են. և պ. Սուքիկեան կը խնդրէ յայտարարել թէ՛ բանտային վիճակէն ազատուելուն պէս՝ իր առաջին գործը պիտի ըլլայ զինք ամբաստանողներն Պատուոյ Ատեանի մը առջեւ հրաւիրել ու իր անմեղութիւնը ապացուցանել»։

ՎԱՌՆԱՅԻ Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը պիտի կատարուի վաղը Ազգ. Վարժարանի սրահին մէջ։ Բուհարկութեան պիտի մասնակցին քաղաքի բոլոր տեղացի և գաղթական հայերը առանց սեւ խտրութեան նոյն օրը մինչև ժամը 2 քուէ պիտի ընդունուի իսկ 2 էն յետոյ քուէ համարը պիտի սկսի։

ՏՕՊԻՉԷՆ ստացուած նամակ մը գեղեցիկութիւն կը յայտնէ տեղւոյն երաժիշտ դասատուին խոր սովորութեան դէմ, նկատել տալով թէ այդ աստիճան տղէտ մէկու մը ինչպէս օգնական ու-

սուցիչի պաշտօն յանձնած են տեղւոյն Ազգ. Վարժարանին մէջ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վենետիկի Միթիթարեան տպարանէն չորհրդակալութեամբ ստացանք հետեւեալ նոր հրատարակութիւնները։

ԲՆԱՇԻՍՄԱՅԻ ԲԱՌՄԱՆԻ առաջին հատորի Ա. գիրքը (Բ. տպագր.) Հ. Ս. Լիբրերիանի։

ՏԱԳՆԱՊԸ Աղագլէպ, Հ. Ս. Երաւեանի

ՃԻՈՒԴԱՅԱՄ Մեղստուամ 4 աւար։ Թ. Կառնոյի թատղ. Հ. Ղազարեանի

ԱՆՆՆԻՏԻ տպարանէն ալ ստացած ենք Օմոր Խայեամի Քառեակները. Գին 3 ֆր.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. » « [433 էջ] 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԿԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԱԿԱՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 սանգիւմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՅԻՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն։ Ձեռնեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ «Իրաւ ու ճշ» ի խմբագրութեան

ՊՈՒԴՐԷՇ Տ. Օննիկ Փափաղեանի և Տ. Յ. Պալէսեանի

ԲՕՆՍՈՒՆՅԱՄ Տ. Սիւսիկ Մէլիքեանի

ԳԱՀԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի

ՍՂԷՔՍԱՆԴՐԻԱ Տ. Ստեփան Մազմանեանի

ՌԻՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Յրանգեանի

«Ուր ապրին անուշէ շատ՝
Եթէ մեզ տրուի.
«Հին աղա՛տ սրտիկդ բա՛ց է՝
Ամեն յապիտի,
«Չունիս դուն երկիւղ ու վախ
Աչքէ մը հրէշի . . .
«Կրսնի թէ՛ կը բուրստ հոն
Շուքիդ մէջ անուշ,
«Ու չը չը կան անգութ ձեռքեր
Որ ըլլան քեզ փուշ . . .»

Սուլթան Համիտ այս գեղջիկ պարբերութեան վրայ սարսափ ինչպէս թի մը վրայ եռցած ջուր մը կը լեցուի . . . աչքերը բացաւ ու չը կըցաւ ինքզինքը զսպել։ Դրանիկներէն մին իրկից ու կանչել տուաւ այդ ըմբոստ ու բռնաւոր ձեռքին տակ «Իր շուքին մէջ չը բո՛ւող գերուհին»։ Իսկոյն կատարուեցաւ այդ հրամարը։

Հրոստարան-դահլիճը մտաւ Սուլթաններու Սուլթանի՝ Սէրֆինազ կայսրուհին։

Գեղանի էր ան։ Երկայն ու ճապուկ հասակ մը ունէր, որ կարծես աննրբութիւն վրձինէ մը քաշուած էր. մէջքը սիւրուն էր ու կը թրթռար նուրբ ներդաշնակութեան մը մէջ. ուսերը ճերմակ ու կաթնաթոյր էին ու կիսովին ցոյց կուտային կուրծքին շուշանները. մեծ ու զրգալի աչքեր, պայծառ ճակատ մը, նուրբանգ աչտեր ու յանկուցիչ շրթեր ունէր որոնք դէմքին կուտային երկնային հուրի մը պատկերացումը։ Հագած էր բաց կարմիր գոյն սիւնանիկ մը, որուն տակ մարմինը

կը դողար հրաբլով մը։ Սէրֆինազ կայսրուհին կեցաւ ու Սուլթան Համիտի երեսը նայեցաւ։

— Դուն էի՞ր երդողը . . . հարցոց Սուլթան Համիտ։

— Ե՛ս էի . . . պատասխանեց Սէրֆինազ։

— Ուսկի՞ց սորված էիր դայն։

— Երդե՛լը։

— Այո՛ւ։

— Ուսկի՞ց պիտի սորվէի . . . զողողաց Սէրֆինազ։

— Մի՛ր լուր. ըսէ՛։

— Ի՞նչ ըսեմ . . . մինակ էի ու երգեցի։

— Եկո՛ւր . . . հետեւէս եկո՛ւր . . . հրամայեց Սուլթան Համիտ ու իր քառասներէն մէկուն մէջ տարաւ զանի։

Հոն անձայն ատրճանակ մը կար Պատէն վար առաւ ու անով սպաննեց Սէրֆինազ կայսրուհին, որ իր առաջին կիներէն ու գեղունիներու գեղունին կը համարուէր։

Այս դարչնիկ ոճիւր գործելէն ետքը ննջարանը քաշուեցաւ՝ իր որսը բողոտող գաղանի մը պէս ու քնանալու պատրաստուեցաւ։

Գառութէ մը՝ քունը տարած էր։

Յանկարծ Սուլթան Համիտ կծու հոտ մը առաւ դարձեալ, որ շնահեղձ կրնէր զինքն, ու վեր նետուեցաւ սարսափով մը։

Աչքը բացաւ ու տեսաւ կանաչորակ լուսնի մէջ իր կնոջ՝ Սերֆինազի գիւղը, Լեւոյ լեռը եղած արիւնը ծածկած էր այդ ողորմելի զոհը, որուն կուրծքը մեծ վէրք մը բացած էր։ Մազները ցանու-

ցիլ թափած իր ուսերուն վրայ, ճակտէն վար կիյնային արիւններու մէջ։ Շարունակ սփածանելն պատճառ պատճառ կը մնար մերկ կուրծքէն կախ ու սրտակիւիք գրեթով մը։

— Նայէ՛, կարմիր-Գաղան, նայէ՛ . . . զոհեց ձայն մը։ Դե՛ս տաք է այդ զոհի գիւղը։

Սուլթան Համիտ սարսափով մը տեսաւ որ խոտոլը մոլորացկանն էր, ու անոր ձայնը խրո՛խտ, վրէժիկնդրական ու սպանալի՛ց էր այս անգամ։

— Տեսա՞ր . . . կրկնեց Մուրացկանը։

Սուլթան Համիտ երեսը մէկ կողմ դարձուց ո՛ր աչքէն կարենայ հեռացունել դայն. սակայն անօգուտ բա՛ն. ո՛ր դին որ դարձաւ, նորէն գիւղը հոն էր։

— Ո՛ւր կը նայիս, անգո՛ւթ, նկատել տուաւ Մուրացկանը։ Չըսի՛ թէ ուրուանկարներս խաւար չունին Ըսէ՛, ո՛վ սպաննեց այս խեղճ կինը։

— Ե՛ս . . . թոթովեց Սուլթան Համիտ։

— Դո՛ւն։

— Ծիչդ է։

— Պատճա՞որ։

— Որովհետեւ անհաճոյ երգ մը կ'երգէր ինծի։

— Եւ դուն սպաննեցիր, չէ՞։

— Հարկա՛ւ։

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

ՍԹԱՆՊՈԼ 24 փետր

Մաքէթոնիտա խոյանաթ իճրա-
ւը խոստումնտա Սուլթան վէ
տէվլէթլէր պէյնինտէ մուխալէ-
ֆէթ սոն տէրէճէյէ կէլիլ տիր,
վէ թալէպ օլլընան նոթթալարա
ճէվապ վէրմէք իշխան Սուլթան
Երլորդաքի Արնալուս բար
թխինտէն գորգար ըմըշ: Պու սէ-
պէպլէ Աստորիա վէ Բուսիա պիր
խլթիմաթօմ թանդիլ իթմէքտէ
տիրէր:

—Սէլանիքտէ բուսիա տէս-
բոթհանէնին էօնիւնէ թօրլանուպ
պուլկար գօմթալարըն հարէ-
քեաթընա գարշը բրթթէսթ իթ-
միշլէր տիր:

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Բօրթ Արթուր գօմանտանըն
մուալիինի ժէնէրալ Սէյնիքոլ
պիր էմիրնամէ նէշլի իլէ՝ նա-
ֆադալարըն ֆիաթլանմասը սէ-
պէպլէ թէպիւշտան աճիլ օլան
էհալինին Երբուքա (Սիպերիա)
նազլ օլլընմասըն էմր իթմիշ:
Եալընը սահիպի իթթիտար օլան
թիւնարլարըն վէ օրտույա լէ-
վազիմաթ թէտարիգ իտէն գօն
թուրաթճըրլարըն Բօրթ Արթուր-
տա գալմալարընա միւսաատէ
օլլընաճադ:

Իշպու էմրտէն մագուէտ մու-
հասէրէ հալինտէ ուզուն միւտ-
տէթ թէհամիլ իտէպիլմէք ի-
շխան օլմալը:

—Բէթէրօպուրկտաքի Չին էլ-
չիսի Բուս ըհմի տաիթլէրինտէ
պէյան իթմիշլէր Չին հիւքիւմէ-
թի քէնտի աքէրլէրինի մուհա-
րէպէ հալինէ գօյմաթ օլէ Չին
իլէ ճաբօն պէյնինտէ տալիմի
տօթլըք միւմքինսիլ տիր:

Խուսխուզարըն հարէքթի տա-
խի Չին էլչիսի, էհէմիթլէթիլ
կէսթէրուպ, անլէր Եալընը
խըրըզ թալթէլէրի վէ էշգիա
չէթէլէրի օլմալլէ Բուս աքէրի-
նէ մուգալմէթ իթմէքտէն
աճիլ տիրլէր տէմիշ:

—Բարիտէ ըհվայթ օլլընտը-
ղընա պինտէն, ժէնէրալ Գու-
րօթթիւնին պէյանը իւլլիէ՝
Մարտ 17 սինէ գատար Մանչու-
րիտա 217000 քիշիտէն իպա-
րէթ պիր օրտու քէնտի էմրի
ալթընտա հազրր պուլլընաճադ
վէ պու օրտու իլէ ճաբօնիանըն
գուլթէթէրինէ մուգալմէթ իտէ
պիլէճէք իմիշ: Նիմիլիք Եալու
նէհրին աղընտա տիւշմանը

պէքլէմէք միւրաճաճ ատտ ի-
տէյօրլար:

—Խարպինտէ նաֆադանըն
նիտրէթինտէն էհալի վէ աքէր
լէր բէք տարտա պուլուըրլար
ըմըշ: Գըշըն շիտտէթի սէֆալէ-
թի տահա զիյատէ արթըրմը
տըր:

ՎԻԵՆՆԱ 24 փետր .

Սապըք Բուսիա հարպիլէ նա-
զըր վէ էլիէվմ Ագուսի ճարգ
գօմանտանը ժէնէրալ Գուրօթթի-
քին՝ մուհարէպէ մահէլինէ Եէ-
թիլ իթմիշլէր մուհարէպէ թա-
թիլ իթմիշլէր իշխան իքի մու-
հարիպ տէվլէթլէր պէյնինտէ
Եվրոքա թէվալիլ իտէճէք:
Թէմին օլլընտըղընա պինտէն
պու Եուսա պիր միւտալիլէ
իշխան Չար քէնտիսի արգու պէ-
յան իթմիշ:

ՕՏԵՍԱ փետր .

—Բուսիանըն ճէնուպի գը-
թաբնտա ինկիլթէրանըն հէ-
սապընա իշթիւրա՝ օլլընմը օլան
600 աթլար Լիպալօտա Բուսար-
տան միւսաատէրէ օլլընտըլար. զի-
րա մէքքիւր աթլար ճաբօնը-
լար իշխան ալլընմը գանն օլլըն-
յօր:

—Բարիտէ իշիտիլէն շայէա-
թա պինտէն, ինկիլթէրա քէր
Թիպլէթ կիրմէք հազըրը-
ղընտա պուլլընյօրլար քի՝ օրա-
տա ինկիլթէրանըն թէհէսիլինի
գուլթէթլէրիսիլէր, Եալուս
պիր տահա տըշարը չըգմասըն-
լար:

ՎԻԵՆՆԱ, 25 փետր .

Ալիկմայիէ Յայրուկըն ինպա-
րը իւլլիէ, Բուսիա վէ ինկիլթէրա
պէյնինտէ սէպէպի միւնալաա օ-
լան պիր չօք մէսէլէլէր իւլլէ-
րինէ իթիլաֆ հասըլ օլմալ, նէ-
թէքիմ, Սուէզ պօղաղը մէսէլէսի,
մուհարէպէ էստաբնտա գօնթ-
րապանտ ատտ օլլընան էշեալար
վէ Թիպլէթ մէսէլէլէրի վէ սա-
լիլէ:
Թահմին օլլընտըղը իւլլիէ, Եալը-
նը ճաբօնիանըն գաթիլէն մաղ-
լուպ օլաճաղը բատտէսինտէ ին-
կիլթէրա թէվալիլ իտէճէք
քի՝ ճաբօնիայը մահլիլթէթէն
գուրթարըն:

ԼՈՆՏՈՆ, 25 փետր .

Բէյրըրըն Թօթիտան ալտըղը
մալիլմաթ իւլլիէ, կէչէն կիճէ
պիր գաչ ճաբօն վաբօրլարը թա-
լիլէնալըն թօրա թուլթիւշլար
վէ սօնրա Բօրթ Արթուրա հիւ-
ճու իթմիշլէր իտէտէ մուվաֆա-
գիլթէթ հասըլ օլմալմը:

—Ֆիկարօնըն Բեթթապուրկ
մուսպիրի բուս հարպիլէ նազը-
րընըն մուալիինի ժէնէրալ Չա.
խարալ իլէ կէթիւշմիսինտէ, պու
չէօլլէ պէյանը հալ իթմիշ տիր.
«Բուսիա Մանչուրիայա 400,000

աքէր Եօլլալաճադ տըր. ճաբօ-
նիա իտէ 200,000 քիշիտէն զի-
յատէ Եօլլալաճադ, պու թէտ-
պիրլէ ճաբօնիայը զալէպէ իտէ-
ճէկիլիլէ շիւքէմիլ գալմալ,
Աքէրլէրիմիլին նազըլ իշխան
ալլար կէչէճէկիլինտէն մուհարէպէ
ուզուն սիւրէճէքտիր: ճաբօնը-
լար իլք կիւնլէրտէ պաղը մուս-
ֆաղիլթէթ էլտէ իթմէլէրտէ, սօ-
նընտա անլէրի արանսըղա կէ-
թիլթէճէկիլ պու քէնտիլէրինէ
բէք բահալը չըգմաճադ վէ պիլ
ճաբօնիայը գաթիլէն մահլ իթ-
մէքիլին Եալալընը պըրադմա-
լաճաղը:

—Պիր գաչ ճաբօն զապիլթէրին
թէպիլիլ զըյաֆէթլէ Վլաթի-
լօպօքըն աքէր տէրօնըն պէր
հալա իտէճէքլէրի տույուլարադ,
միւլթէճաթիլլէր ալլըմը տըր:

—Թօթիտան Մարիկին ալ-
տըղը մալիլմաթ իւլլիէ, ճաբօն
տօնանմասը՝ պիր գաչ վաբօր
պաթթըրմալը կէօղէ ալարադ,
Բօրթ Արթուրըն պօղաղըն գա-
լալադ իշխան էմր ալմը:

—Եէնի վաբօրլար սաթըն ալ-
մադ իշխան Բուսիա թօրլան-
մագտա օլան իանէնին շիմիլէ
գատար 16 միլիոն բուպիլէ պա-
լիլ օլտըղը վէ Եէնի վաբօրլար
Եալմադ իշխան ֆապրիգալարտա
պէօյիւք իսահիլէ իշլէնիլիլի
Բեթթապուրկտան պիլիլիլիլիլ:

—ճաբօնիանըն ինկիլթէրա-
տան վէ Մ. Ամիլիկատան իս-
թիլգաղ իտէպիլմէք իշխան պիր
թարիգ արամագտա օլտըղը նիւ
Եօրքտան պիլիլիլիլիլիլ:

—ճաբօն վէ Բուս աքէրլէրի
էթ վէ սալիլ մէքքիւլաթ իշխան
միւշթիւլաթտա ըմըշլար: Բուս
աքէրլէրի էթ թէտարիլիլ իշխան
ալա չըգալարըն ըմըշ:

ՊԵՐՍԻԱ 25 փետր .

«Պ. Թալէպլաթ» Թօթիտան
իշար օլլընտըղընա պինտէն, պու
ալըն 21 տէն 23 ինէ գատար,
15 վաբօրլարտան միւրէքքէպ
պիր ճաբօն տօնանմասը թէրրար
Բօրթ Արթուրըն թօրա թուլթմոշ
տըր: պիր չօք իսանլէլէր Եան-
մը վէ թէրահանլէլէր վէ Բիթ-
վիլալն նամ հարպ վաբօրը գա-
թիլէն մահլ օլմալ տըրլար:
Պու խոստումտա բէսմի հալաթիս
Եօք տըր:

«Վ. Թալէպլաթ» կաղէթանըն
մուսպիրի Լօնտօնտա ճաբօնը
պիր պէօյիւք տիւրօմաթ իլէ
կէթիւշմիսինտէ, պու տէմիլ
տիր: «ճաբօնիա էհնէպի տէվ-
լէթլէրին թէվալիլ իթիլէսինէ
գարշը տըր: մուհարէպէնին Եէ-
նի պաշլաթըն սըրատա ալսէր
պիր տէվլէթին թէվալիլիլ մու
հարիպլէրտէն թէքիլիլ օլլընա-
մալ: ճաբօնիա գանընըն սօն
տալաթընա գատար մուհարէպէ-

սինէ տէվալ իտէճէք, վէ Եա-
զըն վաղըթտա Բուսիայր վէ ա-
նըն տօնանմասըն արանսըղա
վէ հալլիլթէ ուղարտաճադ տըր:
Իքի ալտան էվլէլ Մանչուրիա
պէօյիւք միւսաատէմէ օլմալաճադ
տըր:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 28 Փետրուար
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալիս	54-59 լիպ. 9-11/11-40
Արապա	52-60 լիպ. 8-80/11. 60)
ԱՐԲԱ	
Վալիս 100 քիլո	8.80/9.10
Արապա 42-45 լիպ.	5 / 5-40
ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ.	4, 20/4, 60)
Վալիս 100 քիլո	10-20/10-50
ՖԱՍՈՒԼԵԱ	100 քիլո 15/16-
Արապա 100 քիլո	14-16
ՏԱՐԸ արապա	57/59 5,80 6,00
ԲՈՒՉՔ արապա	8-80/10-40
ՄԻՍԻՐ Վալիս	7-20/7. 25
ՉԱՎՏԱՐ արապա	6.60-7.20
« Վալիս	6.40/6.90
Կիւնտէ 80 -90 Վալիս վէ	50-60
արապա կէլմէքտէ Վալիս մուսալէսի	
նարթէճ 20 ֆր. արապա մուսալէսի	
նարթէճ 20 80,	

ՍԱՐԻԱՅԻԷ

Նարթէճ 20, 80 ֆրանք
Օսմ. լիւրաք 22, 90 ալթուն ֆրանք

ՊԵՐՍԻԱԻԷ

Վարնա բիպապընտա պաղալիլ	
յալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթու	
ֆրանք իլէ:	
ԳԱՇՎԷ	1,90/2,10
ՇԷՔԷՐ Նէմիլ	80
ՇԷՔԷՐ (քէմիլ) սանարդ	31, -
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուվալը	39, -
» ճաբօն »	38, -
» Ինկիլթ »	27-
» Բիլլի »	54 ֆր.
ԿԱՉ սանարդը	11-60
ՉԷՅՈՒՆ Խաղը քիլո	80-90
ԵՈՒՄԻՐԹԱ 100 ապէտ	4,20-60
ԳՈՒՐՈՒ Իւլիլմ	26

ԵՈՒՄՆԵՍ ՏԱՎՈՒՏԵԱՆ ՎԷ ԵՎԼԱՏԻՍՐ ՏՕՊՐԻՉ

Իլք պահար մէվսիլի իշխան մանի-
ֆաթուրա վէ կալանթարիս մաղադա-
լարմըղա նէֆիս մալլէր, իբէքլի վէ
Եալաղը ֆիստանըղլար վէ սալիլ Եէ-
նի չէլթիլէր Եէթիլմիլ օլմալլէ, Եէթի-
մէթլի միւլթէրիլլէր էգէլէր ճիլէթ մէմ-
նուն իտէպիլթէճէկիլիլ իլան իտուպ,
րրօլա իշխան պիր ալթա մաղադալա-
րմըղա միւրաճաթ իթմէլէրի բէճա
օլլընտըն:

2-6



ՈԴՇԱԴՐՍԻԹԻԻՆ

Եթէ կու պէք հագնիլ կօշիկներ ո-
րոնք իրենց վրայ միապոնեն ձեւի եւ
գիմաղկոյնութիւն կատարելութիւն
եւ մանաւանդ գիւնի չափաւորութիւն,
առանց վարտանիւ գիւնիցք Ս. իս-
րասանճեանի, Մուսալա, Տօթթ.
Պասանօվիլի տանը գիւնաց:

Одозорникъ А. Курбетиявъ

печатница "Взаимность" — Варна,